

հռովմէացի ամբաստանուէին կայսրութեան որեւէ մասին մէջ: Իրենց իրաւունքը անբռնաբարելի էր: «Պալատ» դիմելը պահի մը համար խնդրարկուն կ'ընէր զերծ օրէնքին պարտադրանքներէն: Հարկահաւաք թաթարը կ'ապրի՝ տապալելու համար թրքութեան անունը արատաւորող գազանը ու կը պոռայ ասիկա, ձայնը ո՛ւր որ կը հասնի: Անկէ կը քաշուին, ուղիղ ճակատելու ո՛չ միայն ինքը՝ փորձ մարդասպան պէյը, այլեւ անոր արարածները, բոլորն ալ անշուշտ երկու անգամ մարդասպան, որոնք կը վախնան անոր արջու բազուկէն, երբեք վրիպած՝ դանակ կամ ատրճանակ գործածելու ատեն իր թիրախէն: Հարկահաւաքը պատրաստ է մտնելու ամէն պայմանադրութեան, պարտադրութեան, որուն ելքը յանգէր պէյին աս ու ան կերպով արատաւորման: Ծանօթ եմ դաւադրական իր ընդունակութեանց: Ընդարձակ ծրագիրներ կ'որոճայ, պէյը զարնելու վեհապետին մօտ ամէնէն կասկածելի մարզերէն, քաղաքական ընդդիմադիրներու ցանցի մը մէջ զայն տեղն ու տեղը արժեւորելու: Ու այդ գիծով՝ գոմիքան: Պէյին պաշտպանութիւնը վայելող գիւղի՞ն մէջ: Ի՛նչ հոյակապ առիթ: Ամբոխը միշտ կ'ալեծփի, տրիբունին բերնէն կախուած: Իմ աչքը չի կրնար բաժնուիլ անոր մօրուքիկէն, որ անպայման թաթար հարկահաւաքը պիտի հետաքրքրէ շատ աւելի անդին, քան իրական իր արժէքը: Յետոյ գիտեմ, թէ թուրքէ մը աւելի հայրենասէր ալ է, այսինքն՝ ընդունակ ջարդեր կազմակերպելու: Տրապիզոնի կողմերը ան համբաւ ալ ունեցած է իր անգթութեամբ գոմիթա հալածելու մէջ առաջին աստիճանի փորձառութեամբ մը ու իբր այդ գնահատուած ալ: Կը հասկնայ հայերէն, աւելի համեստ չափով, քան իր ոստիկանը, որ Վանի կողմերէն թրքացած քիւրտ մըն է ու անոր ականջը՝ բոլոր չրջանի գիւղերուն մէջ: Կը բաւէ, որ նշմարէ, թէ կուզ հեռուէն, տրիբունին չարաշուք մօրուքիկը, սուր ու յատկանշական, զիս աչքութեան, որքան սարսափի մատնող այդ յիմար վրձինը, որ, կը հաւատամ, պէտք է վտանգած ըլլայ